

- 5 Եւ եկին ընդ առաջ մեր քահանայք եւ ժողովուրդք եւ մեծարանօք տարան ի ջնուցին ի վանքն Սուրբ Հաճկատար. եւ մեծ հարկիս արարին Ղուկաս պարօնաէրին որպէս Երուսաղէմայ նուիրակին: Եւ նստաւ անդ երկու
- 10 շարաթ. ապա տարին ի քաղաքն եւ հանդուցին ի դարպասն զարդարած, որ էր եպիսկոպոսարան: Զի այսպէս սահմանք էր Լով. երբ նուիրակ զայ Երուսաղէմայ կամ էջմիածնայ, նախ իջնու վանքն. յետ իրեք առուր նստին
- 15 ԺԲ աղայ երեսփոխանօք եւ քահանայիւք եւ զրկեն քահանայ մի երկու աղայով առ նայ, եւ հարցանեն թէ վասն է՞ր եկել է. ժողովքի՞ թէ ուրիշ բանի: Եւ նա ասէ զպատճառն: Եւ թէ ունի վկայական թուղթ՝ տանին փառօք ի քա-
- 20 ղաքն. եւ թէ չունի՝ Վանիցն ճանփու զնեն:

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՔ

- Եւ կայ քաղաքն մեծ եւ փառաւոր վիմաշէն կամարակապ Եկեղեցի մի՝ սագածեւ խաչանման եւ պարսպաւոր. քարէ Վերնատուն եւ կարգաւորաց տեղիք. այլ եւ Դպրատուն մի
- 25 մեծ ամրան եւ ճմեռան քարէ. այլ եւ Գրատուն: Եւ մերձ եկեղեցուն քարէ վախրֆ տներ եւ Հողէտուն մի արանց եւ կանանց: Եւ քաղքէն դուրսն ալ դէմ վանաց մեծ Սբիտալ եւ պատվական:
- 30 Եւ կայր Դպրոցն աւելի քան ութսուն տղայ. որք ուսանէին զանազան ուսմունս՝